

## ԿՐԹՆԸ ԿՐՆ—ԲՐՐՈՅՐԿԱՆ

«Իսկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն». (Յովն. Ա. 1—10).

Յիսուս Քրիստոսի ծննդեամբ և մկրտութեամբ իւրաքանչիւր անգամ մենք սկիզբն ենք դնում եկեղեցական տօների և նոր տարեշրջանի մէջ մտնում: Իսկ ամէն բանի սկզբի վերայ մասնանիշ է անում Յովհաննու աւետարանչից վերև բերած հաստուածը: Ս. Գրքի առաջին երեսն սկսուում է՝ «Սկզբում Աստուած ստեղծեց երկինքն և երկիրը» խօսքերով, իսկ փրկութեան պատմութեան առաջին երեսն սկսուում է. «ամէնից առաջ կար Բանը, և Բանն էր Աստուծոյ մօտ և Աստուած էր Բանը»:

Եկեղեցւոյ շորս աղբիւրները, որոնց վերայ հաստատուած է նա, են շորս աւետարանիչները: Մատթէոսը— Իսրայէլի աւետարանիչը, սկսում է իւր աւետարանը Քրիստոսի ծննդաբանութեամբ Աբրահամից: Մարկոսը— հռովմէացւոց հզօր տէրութեան համար Պետրոս առաքեալի թարգմանիչը, ցոյց է տալիս Փրկչին իբրև մարդու: Նա սկսում է իւր աւետարանը անմիջապէս Քրիստոսի մկրտութեամբ, որին հետևում է Փրկչի ամբողջ գործունէութիւնը: Ղուկասը— հեթանոսների առաքեալ Պողոսի ընկերակիցը, սկսում է իւր աւետարանը Չաքարիայից և սպա տալիս է Քրիստոսի ծննդաբանութիւնը և հասցնում մինչև Ադամ: Իսկ Որոտման Որդին-Յովհաննէս աւետարանիչը, արծուի թևերի վերայ բարձրանում է ամպերից էլ վեր: Նախքան լեռների, երկնքի և աշխարհի ստեղծուելը, ինչ որ Աստուծոյ մօտ էր—անա այս է նորա աւետարանի սկիզբը կազմում: Այդ աւետարանը կարդալով, մեզ այնպէս է թուում, թէ մենք ամէնից առաջ մտնում ենք մի սրբութիւն, մի եկեղեցի, որտեղ մենք

հոգեպէս բարձրանում ու յաւիտենական ոգով լցւում ենք: «Ամէնից առաջ Բանն էր, և Բանն էր Աստուծոյ մօտ, և Աստուած էր Բանը»:

Ուրեմն ի՞նչն էր ամէնից առաջ:

Բանն էր, Աստուծոյ տէրութեան՝ Աստուծոյ էութեան պատկերը: Ամէնից առաջ Նա էր, որ նոյն աւետարանի մէջ կեանք, ճշմարիտ լոյս, մարդկանց լոյս է անուանուում: Ամէնից առաջ Նա էր, որի երկրային կեանքը, ժամանակաւոր գոյութիւնը, որի առանձնապէս սիրոյ կապը իւր Հօր հետ փառաւորւում է այն խօսքով թէ՛ «Աստուծուն ոչ ոք չէ տեսել, բացի Միածին Որդուց, որ Հայր Աստուծոյ մօտ է, որը և մեզ աւետարանեց»:

«Բան» կոչւում է Աստուծոյ Միածին Որդին, որովհետև, ինչ որ գաղտնի, ծածուկ էր Նա հրապարակ հանեց. ինչ որ անտեսանելի էր, տեսանելի դարձրեց, և ստեղծագործութեան ժամանակ Աստուծոյ մտածմունքներին մասնակցեց: Ի՞նչ որ Նա ասում է, խկոյն կատարւում է, ամէն ինչ Նրա միջոցով է ստեղծուել և առանց Նրա սչինչ չէ ստեղծուել: Երբ որ մարդու սիրտը լի է, խօսում է բերանը: Աստուծոյ սրտի լիութիւնն էլ Նրա Պօքի մէջ էր, այն Պօքի, այն Բանի, որ Աստուած էր և Աստուծոյ մօտ էր: Ուրեմն Բանը շստեղծուեց, այլ Նա կար: Բանի որ Աստուած կար, Բանը Նրա մօտ էր, Նրա խորհրդակիցն էր, Նրա սիրտը, Նրա մի ուրիշ կէտը: Նա Աստուծոյ մօտ էր, և Աստուած ինքն էր հէնց, և ուրեմն, Բանը Աստուծուց բաժանուած չէ, այլ Նրա հետ մի է: Յովհաննէս աւետարանչի աւետարանը սկսւում է «և Բանն էր Աստուած» խօսքերով և վերջանում է նոյն խօսքերով, երբ թերահաւատ Թովմասը ծունկ է չոքում յարուցեալ Քրիստոսի առաջ և ասում. «Իմ Տէր, իմ Աստուած»: Նա կեանք էր և կեանքն էր մարդկանց լոյսը: Օ՛, եթէ ամէնքը, ամէնքը հաւատային և խորհրդածութեան առարկայ դարձնէին, որ ոչ միայն մարմինն ու արիւնը, ուտելն ու խմելն է մարդկանց կեանքը, այլ այն, որ Աստուծուց տուած կեանքը փայլում է մարդկային

դատողութեան մէջ իբրև լուսաւորութիւն, խղճի մէջ իբրև դատաստան բարւոյ և չարի մասին, սրտի մէջ իբրև հիմք սիրոյ, կամքի մէջ իբրև ազատութիւն և պարզութիւն: Եւ, ուրեմն, որովհետև Աստուծոյ Որդին առաջ է գալիս իբրև ճշմարտութեան թագաւոր, պահանջում է մեզանից նաև հպատակութիւն և հնազանդութիւն: «Ով ճշմարտութեան Որդի է, նա կլսէ իմ ձայնը»: Աշխարհ գալով նա մի դատաստան է բերում, որ կոյրերը պիտի տեսնեն և տեսնողները պէտք է կուրանան, եթէ այս կարծեցեալ տեսնողները իրենց վատ գործերի պատճառով խաւարն աւելի սիրեն քան լոյսը: Լոյսը երևում է խաւարի մէջ և խաւարն իւր ամբողջ ազդեցութեամբը, անասունաձուլութեամբը շարժելով կարողանայ լոյսին յաղթել:

Այս բանի համար մի վկայ ուղարկուեց. այդ վկան Յովհաննէս Մկրտիչն էր: Ոչ թէ սա էր լոյսը, այլ սա միայն առաւօտեան արշալոյսն էր. ոչ թէ ամբողջ Բանն էր, այլ այդ Բանի մի ձայնը: Ոչ թէ անապատի միջի ճանապարհն էր, այլ միայն ճանապարհ ցոյց տուողը, որպէս զի նրա միջոցով ամէնքը հաւատալ սովորեն: Աւետարանչի սիրտը ցաւում է այստեղ, որ արարածներն իրենց Արարչին չճանաչեցին. որ Իսրայէլը, նրա սեպհական ժողովուրդը, սեղաններով և տաճարներով, օրէնքներով և մարգարէներով իբրև որոշուած ժառանգութիւն Աստուծոյ Որդու, դուռը ծեծող Մեսիային չընդունեց, նրան չհարցրեց՝ ինչո՞ւ ես դուքս մնացել, այլ ընդհակառակը, փոխանակ նրան հիւրընկալելու, բռնեցին, կապեցին և իրենց միջից դուքս ձգեցին և խաչի վերայ կախած դրութեան մէջ անգամ ծաղրում էին նրան և ասում. «եթէ Դու ես Աստուծոյ Որդին, իջիր այդտեղից»:

Յովհաննէսի աւետարանը կարգալու համար մարդ պէտք է ծունկ չոքի և երեխայի նման մաքուր, սլարդ հաւատ ունենայ: Յովհաննու աւետարանը պէտք է կարգալ հասկանալու համար այն բարձր գաղափարները, որ նա տալիս է: Որովհետև այնտեղ Աստուծոյ ճանապարհներն աւելի բարձր են մարդկանց ճանապարհից, ինչպէս

երկինքը երկրից: Ամէն ոք պէտք է սաղմոսերգուի հետ  
ասէ, «ճրքան սքանչելի են քո գործերը, Տէր, և ճրքան  
անթիւ են նրանք»: (Սաղմ. ՃԼԹ. 17, 18):

Աստուծոյ Բանը, Քրիստոս աշխարհումն էր և աշ-  
խարհն նրանով ստեղծուեց: Իսկ աշխարհն Նրան շն-  
դունեց ոչ միայն իբրև կիւրակնօրեայ հիւր, այլ մինչև  
իսկ իւր Տէր, իբրև իւր ամենալաւ բարեկամ, հաւատա-  
րիմ խորհրդատու, ողորմած, բարեսօս և ամենազօր Բարձ-  
րեալ: Թէ դուցէ հայրենագուրկի դանգատը մեզ վերայ  
պիտի կատարուի, որ ազուէաները իրենց որջն ունին,  
երկնքի թռչունները իրենց բունը, իսկ մարդու Որդին,  
ոչ մի տեղ չունի, որ իւր գլուխը դնի: Նա որ ամէն  
բանի սկիզբն է և վերջը, որի անուամբ մենք մկրտուած  
ենք և հաղորդուած ենք, որի անուամբը եկեղեցւոյ մէջ  
մեր պսակներն են լինում, որի անուամբը մեր եկեղեցի-  
ներն են շինուած, մեր ուսումնարանները բացուած և մեր  
գերեզմանները կնքուած, արդեօք կընդունի՞ Նա մեզ իւր  
սեպհական տան մէջ: Արդեօք մենք մեր երեխաներին,  
մեր սրտերը նրան ենք նուիրում. արդեօք ցանկանում  
ենք երջանիկ լինել նրա և միմիայն նրա միջոցով:

Մի քանի շաբաթից յետոյ մեծ պասն է գալիս, որից  
յետոյ սկսում են ապաշխարութեան օրերը: Այժմ իւրա-  
քանչիւր մարդ հոգով և ճշմարտութեամբ պէտք է երգի.  
«Ինչպէս պէտք է քեզ ընդունեմ և քո առաջդ դուրս գամ,  
Տէր,»: Տես, ասում է Տէրը, ես կանգնած եմ դուրսը և  
ծեծում եմ քո դուռը. եթէ մէկն իմ ձայնս լսի և դուռը  
բաց անի, կը մտնեմ նրա սենեակը և երեկոյեան ընթրիքը  
նրա հետ կը կիսեմ:

Իսկ դու, քրիստոնեայ ժողովուրդ, արդեօք սրտիդ  
դռները բաց են ընդունելու համար Տիրոջը, որ դուրսը  
կանգնած ծեծում է դուռդ, և որը մի քանի օրից յետոյ  
բոլորիդ ապաշխարութեան պիտի կոչէ: Ահա այսօր Նա  
դուրսը կանգնած ասում է. «Ես եմ հովիւն քաջ, հովիւ  
քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»: Նա իւր ոչ-  
խարներին լաւ է ճանաչում, և արթուն աչօք հսկում է,

որ շլինի թէ գայլը գայ և յափշտակէ: «Եւ ոչխարք իմ ձայնի իմում լուիցեն և եղիցին մի հօտ և մի հովիւ»: Այս խօսքերը մեզ համար է ասած, մենք ենք Քրիստոսի հօտը, բանանք մեր սրտի դռները լսենք Նրա ձայնին, ընդունենք Նրան ներս և պատսպարենք: Թող ամենակարողն Աստուած ձեզ մաքուր հոգի և սիրտ տայ, մեր Տիրոջը արժանի կերպով ընդունելու և «Եսայի մարգարէի հետ ասելու. Եւ այժմ, Տէր, մեր հայրը Դո՛ւ ես, մենք կաւ ենք, դու մեր ստեղծողը և մենք Քո ձեռքիդ գործն ենք: Մի բարկանար մեզ վերայ, Տէր, և մի յիշիր մեր մեղքերը: Եւ այժմ նայիր, Տէր, Քո ժողովուրդդ և Քո Տաճարդ Սիօնը Երուսաղէմի նման աւերակ դարձան, Քո սրբութեան տունն անէծքի մասնուեց և մեր հայրերի Քեզ տուած փառքը հրձիգ եղաւ: Եւ այս բոլորից յետոյ դեռ լսում ես, Տէր»: «Ես եմ հովիւն քաջ, և ճանաչեմ զիման և ճանաչիմ յիմոցն». Թող Տիրոջ այս ձայնը զգատացնէ ձեզ և պատրաստ պահէ Տիրոջն ընդունելու համար. ամէն:

**Քեր. Թարգ. Առակ վարդապետ**

